

անձնազոհութեամբ ծառայել նորան և լցուցանել նորա բազմատեսակ կարօտութիւնները։ Եթէ հինգերորդ դարու հոգերականները կարող էին միխաւարամած և յոյժ տղետ ազգ, ազգ՝ որը դեռ չուներ մինչև անգամ իւր կանոնաւոր այրբէնը, իսկ հանել այնպիսի դրութիւնից և հասցնել լուսաւորութեան բաւականին բարձր կետին, կարող էին հաստատել ընտիր դրաբոցներ և ծաւալել դիտութիւններ, կարող էին յօրինել և նուիրել ազգային դեռաբուս մատենազգութեան։ Ոսկի դար, կարող էին ազգը հասցնել երջանիկ կեանքին, տասնեւիններորդ դարու հոգեւորականները կարող են կատարել նոյնը, կարող են կատարել կրկնապատիկը, եթէ նոցա պէս հարուստ լինին դիտութիւններով և վառած լինին ազգասիրական կրակով, այս աստուածային կրակով։ Երդարե, նոցա ժամանակ կային և շատ բարեյաջող հանգամանքներ՝ միութիւն ազգի, քաղաքական ոժ, ուսումնասէր և խրախուսիչ հայրապետ, բայց և այժմ կան ընդհանուրմարդկութեան քաղաքակրթութեամբ պատրաստած առաւել ուղիղ ճանապարհներ և դիւրին միջոցներ, մանաւանդ և այժմ ունինք ազգասէր և ուսումնասէր Հայրապետ։ Խնչպէս այն ժամանակ ժողովուեցան սուրբ Ուհակին և սուրբ Մեսրոպի չորս կողմը աշխոյժ, ազնիւ, ուսումնափափագ և ազգասէր երիտասարդներ, թող և այժմ ժողովուեն Ա. Եհափառ Գհեորգի չորս կողմը նոյնպիսի երիտասարդներ։ Ինչպէս այն ժամանակ՝ նախ ցրուելով բոլոր լուսաւորեալ քաղաքների մէջ և ամենայն տեղ հաւաքե-

լով մեղուների պէս բարձր և պատռւական գիտութիւններ և յետոյ գումարուելով և կենդրոնանալով Ա. աղարշապատ մայրաքաղաքի մէջ՝ սկսեցին բղնել և տարածել ամենայն ուրեք իւրեանց գիտութիւնները հիմնելով ազգային դպրոցներ, թարգմանելով և շարադրելով ընտիր մատեններ, քարոզելով եկեղեցիների և վանքերի մէջ, թող և այժմ կատարուեց սոլորը, և անշուշտ ամենակարծ միջոցում վերստին կորոգուի մեր կեանքը և կպայծառանայ Հայաստանեայց սուրբ Եկեղեցին։ Ա. Եհափառ Հայրապետը բացել է արդէն իւր դուռը և պատրաստ է սիրով ընդունել Հայ երիտասարդգներից բարեմիտ մարդիկ, անկեղծ ազգասէրներ, հաւատարիմ և քրտնաջան մշակներ, միասին խորհնել և գործել ազգի յառաջադիմութեան և Եկեղեցւոյ պայծառութեան համար։

Ա. Ամենա Եբեղայ Բարտարավանց:
28 Ապրիլ, 1872 ադ։

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՃՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ.

(Հայունականութիւն)։

Ա. Ամենա+.

Տաճարի արեկելակողմն քարափի մէջ բաւական խորութեամբ փորուած ջրոյ աւազան մի կալ, ուր տեղ հոսել է յառաջ աղբիւր ցուրտ ջրոյ ։ Ա. Կաթանք, անունով. և ինչպէս կպատմեն, ամեն կիւրակնամուտ երեկոները մոմ կը վառեին

այս տեղ . աւանդութիւն բնակչացն Ապրակունեաց կասէ թէ՝ այնքան յորդ ջուր կվագեր այս սուրբ Կաթանքէն, որ մինչեանդամ Պարսիկ աւազակ խումբերէն շըրջակայ և այ գիւղորեից բնակչաց այս մենաստանի մէջ ամրացած ժամանակը՝ բազմաթիւ գերգաստանաց պիտոյից բաւականութիւն կտար, և ցամաքեցաւ կասեն վատարարոյ մարդոյ մի մեղաց պատճառաւ, որ գարշ գով անարգած էր սորա յարդը Ա. արդավառի խառնիճաղանձ բազմութեան ժամանակը:

Արնջակու Ա. Կարապետի այս մենաստանը առհասարակ տեղական և Վահմետական բնակչաց մէջ հոչակուած է իրբեւ բուժիչ խայթուածոց օձից. երբ որ մէկը հարաւ օձէն, պէտք է զիտել որ իսկոյն կրերուի այս տաճարի դուռն. ուր օրհնութեան ասացեալ հողէն (որոյ համար յիշած եմք) քիչ մի օձահարի բերանը ձգել տալով, և քիչ մի ջրով շաղղած խայթուածի վերան կապելով կմիամտուին բոլորովին: Եյս դէպքը քանից անդամ կրկնուած է իմ օրովս և տեսած եմ որ ինչպէս և ոյնպէս և Վահմետական օձահարները այնուհետեւ որչափ ուրախութիւն կզգան իւրեանց մէջ: Եյսպիսի փորձերով կարելի է կշռադատել թէ ներքին անդորրութիւնն սրտի որչափ ներգործութիւն կարող է ունենալ մարմայ վերայ:

Վասուն+ Ա. անիցա.

Ե. Հաղպատիկէն ասացեալ Ա. Կան, արծաթեայ մեծաղիր ոսկեզօծ քառամետապահարանի մէջ. այս Ա. Կանն ոմանք կը համարէն լինել մասն կոնքին, որի մէջ

Վրիստոս իւր աշակերտաց ոտները լուաց. իսկ ոմանք մասն թաշկինակի Տեառն. տեղւոյս առաջնորդ Մատթէոս Առպիսկոպոսի, ներկայ միջոցէս յիսուն տարւոյ շափյառաջ առ ժողովուրդն ուղղած օրհնութեան թղթին մէջ վերջինն կծանալուի, այսպէս սկսելով, “ Ի դրանէ Արնջակու Ա. Կարապետի շնորհալի տաճարէն, և Ա. Թաշկինակին Քրիստոսի , և լու. իսկ Մանուէլ Ա. Կիւմի շխանցի կհամարէ լինել առաջինն: “ Հազարափրկիչ, կոչւելոյ պատճառն կմեկնէ աւանդութիւն բնակչաց երկրիս, և կհաստատէ նոյնն լինել որ ինչ “ Վարդաղաւնեաց ”, սուրբ նշան կոչուելուն, հին յիշատակարանների մէջ : Զահկեցւոյ “ Հանկալի դրախտի ”, 672 երեսին՝ այս սուրբ նշանի համար կզատմուի թէ երբ որ Լանկիթամուր կգերէ Արևեաց երկիրը, մի ի գերելցն Առպիսկոպոս Յովհաննէս անուն այս սուրբ “ Կանան յոււն կապած կձգէ զինքն ի գետն և “ շնորհօքն սուրբ “ Կանին զընայր ի վերայ ջրոյն ” որպէս ի ցամաքի ”, . գերեվար զօրքը տեսնելով կզարհուրին և կյայտնեն Լանկիթամուրին, որ երգմամբք կհաւատացնէ շվասել, միայն թէ գոյ և պատմէ իրան թէ որ զօրութեամբ ջրոյ վերայ անվնաս կընթանայ. և եպիսկոպոսն մօտ գալով կյայտնէ թէ այս Ա. Կանի զօրութեամբ որ ինձ հետ է. թագաւորն հրաշից վերայ զարմացած կասէ եպիսկոպոսին, ինչ որ կուղես՝ խնդրէ և տամ . և եպիսկոպոսն ցոյց տալով մօտակայ փոքրիկ մատուռն մի կասէ, խնդրեմ որ որչափ գերիք պարունակուին այս մատրան մէջ՝ ազատ լինին, որ և իսկոյն կկատարուի. բայց մտածները սուրբ “ Կանի զօրութեամբ ա-

զաւնոյ թե առած լուսամտէն կթոշին կերթան, և այսպէսով կարճ միջոցի մէջ գերիքը կվերջանան, և մատուռն չի լցուի. զօրքը ապշած ներս կմտնեն, և հասու լինելով հանգամանքին, իսկոյն ահարեկ կը թռղուն կմեկնին անտի. այսպէսով սուրբ նշանն երկու անունն ես կառնու. “Մարդարաւնեաց,՝ որ մարդկանց աղաւնւոյ թե պարգևելով կազատէ, և “Հազարափրեկէ, որ հազարաւորները կիրկէ. նոյն մատուռն՝ որոյ համար կպատմուի այս հըրաշքը, և ուր սուրբ նշանն երկար ժամանակ մնացած է մինչև ցփոխազրութիւնըն, կոչի այժմ “Գիւղիւ վանք,՝ և է “Եախիջւան գաւառի Առինջ գիւղէն եօթն վերստ հեռի, այլ ամայի և լոքեալ:

Հայր Միքայէլ Չամշեան առասպելեաց կարգը դասելով այս աւանդութիւնն, կը զըէ, “այլ այս առասպելք չունին պէտքնութեան. և թէ կայցէ իսաւ այնպիսի անուամբ, մի ոմն ի զբողաց յօրինեալ իցէ զայսպիսի անհեթեթ պատճառ, վասն յարմարելց զնշանակութիւն անուանակոչութեան նորին: Եւ դարձեալ, “Ե. յն է զարմանալին, զի Յահէկեցին իբրև սույդ ինչ ի մէջ բերէ զայս. բայց թուի թէ ոչ ինքն, և ոչ միւս պատողն հաւատան այնմ զոր զբէն, (տես Չամ. Պատ. հատ. Գ. ծանօթ. Օ. զբոց եր. 881—882):

Պատմական ապացուցութեամբ ստուգւած չէ թէ ե՞րբ, և ուստի բերուած է Ա. նշանս, կամ ե՞րբ փոխազրուած այս մենաստանը. միայն Յահէկեցին կզըէ, որ թռաղէոսի առաքելոյ Հայաստան բերած իսաւն է: Ա. երջին ժամանակներս Կիւմիւշիանցի Մանուկէլ վարդապետն, իւր Ակ-

ւանայ վանուց ստորագրութեան մէջ կյի չէ թէ՝ Ծաղէոս առաքեալն Կոնքի մասերէն երեք խաչ շինելով իւր ձեռամբն բերած է Հայաստան. յորոց մինն այս Երլնջակու Հազարափրեկէ Ա. նշանը, միւս Աւանայ վանուցն, և երրորդն՝ Գրիգորիօպօլ քաղաքին Խրիմու: Եյս Հազարափրեկէ Ա. նշանս ոչ միայն երկրի Հայքնակչաց, այլ և օտարաց և նոյնիսկ Մահմետականաց ակնածելի և նուիրական է, և ես քանիցս տեսած եմ Մահմետականաներ զոհիւք եկած յերկրագութիւն. ամեն ժամանակ կան սորա ջերմեռանդ ուխտաւորները. և երբ ձախորդութիւն կամ մօտալուտ վտանգ կամ ցաւ պատահի ժողովրդեան և երկրի, ամենքն առհասարակ ջերմեռանդագին սրտիւ կդիմեն դէպ իստ, և շրջեցնելով իւրեանց մէջ թափօրական հանդիսիւ կհայցեն բարեխօսութիւնն յօդնութիւն: Իսաց ի այս ժամանակները, “Եախիջւանի բարեպաշտ ժողովրդոց վաղեմի սովորութիւնն է ամեն տարի Կանաչ Կիւրակէին շքեղ հանդիսիւ քաղաքը տանել:

Բ. Եջ Ա. Կարապետին Յովհաննու արծ. ոսկեղօծ:

Գ. Եջ Յովհաննու Ոսկեբերանի արծ. ոսկեղօծ:

Դ. Խաչ արծ. մեծաղիր մասամբ Ա. Կարապետին. յիշատակ տուեալն վանիցս Յուղայեցի Յակովը Կաթուղիկոսէն թվ Ուռ’Ե:

Ե. Խաչ արծ. չփթիշի, մասամբ Պետրոսի առաքելոյն:

Զ. Խաչ արծ. չփթիշի, մասամբ Ա. Կարապետին և Պետրոսի Առաքելոյն:

Լ. Խաչ արծ. մասամբ Կենաց. Փայտի:

Ռ. Խոաչարծ, մասամբ Ա. Կարապետին։
Թ. Խոաչ, արծ, չփթթիշեք երեք անյայտ
մասամբք։

Ժ. Տուփքը երկու՝ մինն արծ, ոսկեզօծ,
միւսն փայտեայ, պարունակեն զմասունս
սրբոց, այլ չէ յայտ թէ որոց։

Չեռագիշ ճադիտներ Ա անկցա։

Զիք տարակրյս որ այս մենաստանն պիտի
հարուստ դրադարան ունեցած լինի,
բայց դժբաղդարար կորցրել է ամենը մեր
Հայաստանի միւս վանօրէից նման, է որ
հարստահարութեանց և յափշտակու-
թեանց և է որ տգիտութեան խաւարի
թանձրանալուն պատճառաւ, որով յարգ
և արժէք չունենալով դիւրաւ կարող
էին ոչնչանալ. այժմու ունեցածներն մի-
այն քանի մի հատ ձեռագիր Եւստուածա-
շունչ և Եւետարան են դիպուածով գրտ-
նուած ինչպէս յիշած եմք, որոց մէջ նր-
շանաւորներն են։

Ե. Եւետարան փոքրադիր ամբողջ,
պատկերազարդ, ընտիր գրչագիր գրեալ ի
մագաղաթի ի Ա. Պօլիս ի թուին Հայոց
ՈՒԴԻ. յեղիա դպրէ Համեկցւոյ. ունի
ի վերջն յիշատակարան գրողին և ստա-
ցողացն՝ Մարինոս կուսի ։ Որ ետու (ա-
սէ) զայս ոսկեզօծ սուրբ Եւետարանս յի-
շատակ հոգւոց մերոց և ամենայն արեան-
առու ազգատումին մերոյ՝ կինդանեաց և
ննջեցելոց ի դուռն մեծի անապատին Աէ-
վանայ, որ յերկրին Գաղամայ ի
թուականին Հայոց ՈՒԴԻ, . . . , և Մկրտ-
իչ վարդապետի, որոյ յիշատակարանն
է ։ Պարձեալ երես ի գետնի եղեալ ա-
ղաշեմ ի մաքրափայլ աղօթից ձերոց, ով
սրբանունդ հանդիպողք սուրբ գեղեցկա-
նկար և աստղւածարան տառիս, յիշեցէք

ի Վրիստոս զվերջեն ստացող սորին զՏէր
Մկրտիչ բազմաշնատ վարդապետն՝ որ է
առաջնորդ Արբոյ Կարապետիս որի գաւա-
ռը Երինջակ։ Որ և զայս ոսկիակազմ և
սուրբ մատեանս աստուածային ետ յիշա-
տակ ի սմա։ Եւ զՃնողդ նորին զտէր Մկրտ-
իչ քահանայն, և զլ ապիկսան հեղահո-
գին և եղբարք նորին ըստ մարմնոյ զտէր
Դազար քրտնաջան վաստակաւոր Հայ-
րապետն ամենայն Հայոց և զտէր Անդրէ-
ս պարզամիտ քահանայն ի
թուականիս Հայոց հազար հարիւր իննը-
սուն և վեց, . . . :

Բ. Եւետարան փոքրադիր ամբողջ գե-
ղազարդ պատկերօք ընտիր գրչագիր գրեալ
ի մագաղաթի. թուականն և անուն գրչին
անյայտ. ունի ի վերջն յիշատակարան
ստացողին — Ըօոօթցի Խօջենց Մկրտչ
որդի մահտասի Հայրապետին, այլ ան-
թուական։

Գ. Եւետարան փոքրադիր ամբողջ գրե-
եալ ի թղթի. ի սկիզբն ունի նօտրագիր
յիշատակարան ստացողի ի տեղիս տեղիս
եղծեալ, և է այս, « Եւետարան Ժառայս
Եստուծոյ Գրիգորի անք
զաստուածապատում մատեանս ի
արդեանցս ի . . . ելումն ինձ և ոց
իմ անկեալ ամենից ք . .
սմայ յիշես յիշեք յարժ թս ձեր զըս-
տացող իմ. և որք յիշման զմեզ
. . . . զինքն իւր երկնից արքայութեանն
. . . . առնէ ամէն զրեցաւ թվ. Պիշ, . . .
ի վերջ Եւետարանին Մատթէոսի ։ Օլս-
տացաւղ սուրբ աւետարանիս զգերապա-
տիւ զաստուածասէրն և զմար-
դասէրն ամենայն զարմիւք ծնողաւք և
բնաւին ազգականաւք յիշեսջիք ի Վրիս-

տոս Աստուած ի քաւութիւն ամէն . . . իսկ ի միւս երես թղթոյն “Ա երստին ըստացայ զաստուածախօս սուրբ Եւետարանս ես նուաստ ծառայս Աստուծոյ տիրացուս ելն . . . և եղաք ի սուրբ ուխտըն ի վանքն Ապահունեաց ի սուրբն “Աիկողայոս . . . գրեցաւ զիրս Հայոց թրվականին ՊՃ.Օ. մարտի ԻԲ. ի վերջ Եւետարանին Յովչաննու “ի թրվականիս Հայոց ՈՒՃԴ. ի Հայրապետութեան Ա. Էջմիածնի Տ. Յակոբայ և ի թագաւորութեան փոքրն Շահարասին, ես Յովչաննէս եպիսկոպոս սպասաւոր և վերակացու Աղղմոսավանից և Լուսաւորչ սուրբ յանապատիս, տուել էր Ապարանցի մելիք Յովասափ էրէցն վախմ. մեք այլ տեսինք և իմացանք այս սուրբ աւետարանըս որ Աստուածընկալ սուրբ “Աշանիս էր . . և լն. ապա գայ նօտրգիր յիշատակարան թուականի և գրչի Եւետարանին “Փառք ամենասուրբ Երրորդութեանն և մի Աստուածութեանն ամէն. գրեցաւ Ա. Եւետարանս ի թվ. ԶԾԾ. ի մեծ գրպատանս որ կոչի Գալիձոր ի վարժապետութեան մեծիս Եսայեայ, և եռամեծին Դաւթայ, ձեռամբ անիմաստ գրչի Տիրատուր. Կիլիկեցւոյ . . և լն:

Դ. Եւետարան մեծադիր փառազարդ պատկերօք և նկարուք. ընաիր գրչագիր դրեալ ի մագաղաթի, ամբողջ մի երեսն արծաթապատ, յորում և պատկեր մկրտութեանն ՊՃիստոսի. ի բուն սկիզբն ունի յիշատակարան Տէր Եւագայ, գնողի զայս աւետարան ի թուականին Զ.ՁԱ., և առողի ի դուռն Ա. Կաշանին վախմ. ի վերջն ընդ երկար յիշատակարան ստացողի նորին Ա. արդան կուսակրօն քահա-

նայի, “ . . . իսկ ի թուականիս Հայոց Զ. յամն աստուածապատիւ մեծի Ա. թուղիկոսիս Հայոց և հասարակաց հաւրս Տեառն Կոստանդեայ, զոր Տէր Աստուածընդ առաջին հայրապետացն դասեսցէ. ընդ որս ես Ա. արդան նուաստ ծառայ Պ. Պիստոսի և աշակերտ սուրբ տանս և ըստ շնորհացն Աստուծոյ ըսպասաւոր և փակակալ մեծափառ Տաճարացս Աստուծոյ տանս հայրապետական, աստուածապահ գղեկիս որ կոչի Հառոմկայ :

Ե. Աստուածաշունչ մեծադիր ամբողջ և անարատ, գրեալ ի մագաղաթի ընաիր գրչագիր, ոսկենկար և փառազարդ պատկերօք շքեղացեալ. ի վերջն ունի ձիգ յիշատակարան Խորոս Ա. ստացողի գրոյն, “Եղե սկիզբն գրոյս և աւարտումն Կոստանդնուպօլիս ձեռամբ Աստուածատուր դպրի ի թվականութեանս Հայոց ՈՒՕ. . . ի ներքոյ սորին գայ և հետեւալդ. “Իթրէին ՈՒՃԴ.ԻԲ. ի հայրապետութեան տեառն Յակոբայ եղաւ սուրբ տառս ի վանս Երինջակայ ի վայելումն հեղահոգի մեծ վարժապետին Եսայեայ, զոր յայսց աւուրս նոր նորոգեալ կոփածու վիմով և գեղեցկազան յօրինուածով զառիր եկեղեցին որ Ա. Կարապետ վերաձայնի, որ և իսկ յորդորիչ եղե սուրբ գրոյս, զի անջնջելի յիշատակ կացցէ ի սուրբ ուխտս Ապրակունեաց . . . :

Զ. Աստուածաշունչ մեծադիր, ոսկեզօծ նկարուք և փառազարդ պատկերօք ընաիր և զարմանալի գրչագիր դրեալ ի մագաղաթի ամբողջ. իսկ շատք ի պատկերացն և նկարացն մնան գեռ թերիք և շատիցն դեռ տեղեքն թողեալ մնան առանց սկսանելոյ. ըստնի յիշատակարան:

Ե. Սատուածաշունչ մեծաղիր գրեալի մագաղաթի ընտիր գրչազիր ծաղկանկար, այլ ի խոնաւութենէ ի տեղիս տեղիս եղծեալ և խրթնացեալ, ունի երկար յիշառակարան, յորում և պատմին համառօտիւ արարք և խռովութիւնք Խղիազարու

Ենթապցւոյ, ստացող դրոյն և ջահկեցի Հայրապետի որդի խօջայ Խմիրզան, որ “ետ յիշատակ զսա անջնջելի և անանց առ սուրբն սիօն, բարձրաբերձ գահն, և յերկնաքատակ աթոռն Խրթնջակու ի թուականութեանս Հայկականի սեռի Ո՞՛՛ և ձագ ամի ի ծովապար և յարքայանիստ քաղաքն Բատամբուլ,, :

Ը. Կարեկ միջակաղիր, անթերի գրեալի թղթի ի թուին Ո՞՛՛Ռ' Ե:

Թ. Մաշտոց, զիրք ծիսակատարութեան, մեծաղիր գրեալ ի մագաղաթի ընտիր գրչազիր, չունի յիշատակարան:

Կառած + Անհապանիս.

Անհաստանս ունի հարիւր խալվարաչոփ հող, յորմէ քառասուն խալվարն անջըրդի. նմանապէս այդի մի, ծառատունկ պարտէզք երեք, ջրաղաց մի և ձիթահան մի:

Արտէն + Անհապանիս.

Այս վանքի արդեանց աղբեւրներն են, երկրագործութիւնքն, յուխտաւորաց գոյացեալ նուէրք, Վարդավառի հանդիսաւոր ուխտի արդիւնքն, և սրբոց մասանց ըստ սովորութեանն ի Կախիջեան և յայլուր տանելն:

Հ Յնուած + Անհապանիս.

Քսան տարի յառաջ այս վանքը գրեթէ օրինաւոր սենեակներ ունեցած չէ կրօ-

նաւորաց և հիւրոց բնակութեան համար բաց ի հարաւակողմն եղած “առաջնորդարան,, ասացեալ թաղակապ երկյարկ աները, մինչեւ որ Խրեմիա վարդապետ յաւուրս իւր կանգնել տուած է քանի մի սենեակներ:

Գեշենմանապան.

Հիւսիսակողմն պարսպի մօտ փոքրիկ բլրակի վերայ և գերեզմանատուն վանիցս, ուր ամփոփուած են մարմինք միաբանից տեղւոյն. նոյն կողմն գարձեալ, բայց բուն պարսպի տակ կան քանի մի գերեզմաններ, որք կը են խոյածե տապանաքարեր. կերեւին սոքա բաւական հին, բայց դժուար է որոշել թէ որո՞յ ժամանակի, և որո՞ց մարմինքն են աճիւնացեալ. մօտ օրերս դիպւածով երեւեցան հարաւային պարսպին տակ քանի մի գերեզմանք՝ որք մինչ ցարդաննշմար անյայտացած էին խճանիւթ կարկառին մէջ. ի ներքուստ ամենքն մաքուր բռած և յարդարած փոքրիկ խրթիկներ էին, ուր կային միայն ոսկերոտիքն, զորս ի նկատի առնելով, գուցէ ակամայ ծշգրլտած լինիմք Օրբելեան Ատեփաննոսի այս խօսքերը “Օի զո՞ն աստ գերեզմանք հայրապետաց, որք էին պատահմաբ եկեալ վասն ամրութեան բերզին ի ժամանակս եպիսկոպոսացն Ախոնեաց, և անդ վախճանեալ,,. (տես Պատմ. Ախոնեաց Ա. Օրսկ. հատ. Բ. եր. 110, ի լոյս ընծ. Ա. Վ. Շահնազ):

(Հայունականիւթէ)